Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԱՐՏԱՇԱՏԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(18 նոյեմբերի 2018 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

Սիրելի՛ բարեպաշտ քոյրեր և եղբայրներ,

Այսօր Սուրբ Պատարագի ընթացքում սարկավագն ընթերցեց Ղուկասի Ավետարանի Թ. գլխի 44–50 համարները։ Ներկայացված հատվածը վերաբերում է Քրիստոսի աշակերտների միջև ծագած վեճին՝ «թե արդյոք ով է իրենցից մեծ»։

Այս նույն հատվածը հանդիպում է նաև մյուս երկու համատես Ավետարաններում՝ Մարկոսի և Մատթեոսի տողերում։ Եւ եթե Մարկոսի և Ղուկասի հատվածները նույնական են, ապա Մատթեոսի նախաբանը երանգային առումով տարբերվում է։ Նրա շարադրանքում աշակերտները չեն վիճում՝ «թե արդյոք ով է իրենցից մեծ», այլ ինչպես Ավետարանիչն է ներկայացնում «Մօտեցան Յիսուսին եւ ասացին. «Մեզանից ով է մեծ երկնքի արքայութեան մէջ»։

Հիմնական տարբերությունն այն է, որ Մատթեոսը մասնավորեցնում է, թե «Մեզանից ով է մեծ», հարցադրումն աղերսակցվում է երկնային արքայությանը։ Սուրբ Գրոց մասնագետները վաղուց ցույց են տվել, որ Մատթեոսին հատուկ է այս մասնավորեցումը, նա հետևողականորեն շեշտում է հարցի հոգևոր տեսանկյունը։ Սակայն բերյալ հատվածի խորին ընթերցանությունը բացահայտում է, որ խնդրի բովանդակությունն ըստ էության չի փոխվում. անկախ այն բանից՝ «մեզանից ով է մեծը» հարցադրումը վերաբերում է երկնքի արքայությանը, թե պարզ մարդկային գոյությանը։

Սիրելի՛ հայորդիներ,

Արտաքին դիտարկմամբ այսօրվա մարդու համար թեպետև անպատշաճ է հնչում «մեզանից ով է մեծը» հարցադրումը, սակայն շատ բնորոշ է այն մարդկային էությանը։ Կարելի է ասել նույնիսկ, որ աշակերտները որոշակիորեն անկեղծ էին իրենց հարցադրման մեջ. նրանք բարձրաձայնում էին մարդկային գոյն ու էությունը հուզող կարևորագույն մի խնդիր, որը, շատերի ընկալմամբ, իմաստ է հաղորդում այս կյանքի մրցավազքին։

Մի՞թե մեր ժամանակների մարդը զերծ է այն նույն գայթակղությունից, որի պատճառով առաքյալները վիճում էին։ Իհարկե ոչ։ Մեր մտքերում ևս հաճախ հարց է ծագում, թե «մեզանից ով է մեծը» ՝ սկսած պարզ ընտանեկան հարաբերություններից վերջացրած եկեղեցում, երբ միասնաբար՝ իբրև Աստծու որդիներ կանգնում ենք պաշտամունքի։ Ավելին։ Մարդկային վարքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հենց այս հարցադրումն է ընկած կյանքի մրցակցության հիմքում։ Մենք մրցում ենք մեծը լինելու համար՝ դրամով, դիրքով և անգամ գիտելիքով։ Եւ բոլոր դեպքերում մեծը լինելու միտքն առնչվում է իշխանության հետ, իշխանություն մյուսների նկատմամբ։ Միգուցե հասարակագետները բնական համարեն այս մրցակցությունը և նույնիսկ անհրաժեշտ մարդկային առաջընթացի համար։

Ճիշտ է, ավետարանական պատմության մեջ Հիսուս չհանդիմանեց իր աշակերտներին «մեզանից ով է մեծը» հարցադրման համար, սակայն, հետագա շարադրանքը ցույց է տալիս, որ Նա մեծ լինելու այլ կաղապար առաջադրեց իր աշակերտներին, իրենց պատկերացրածից արմատապես տարբեր մի բան։

Ավետարանիչը պատմում է, որ ի պատասխան աշակերտների հարցադրման Հիսուս «վերցրեց մի մանուկ, կանգնեցրեց նրանց մէջ իր մօտ եւ ասաց նրանց. «Ով որ այս մանկանը ընդունի իմ անունով, ինձ է ընդունում. իսկ ով որ ինձ ընդունի, ընդունում է ինձ ուղարկողին. որովհետև, ով որ ձեր մէջ փոքրագոյնն է, նա՛ է մեծ»։ Այս միտքն ամբողջացնում է Մատթեոսի համապատասխան հատվածը, որտեղ ավելի պարզեցված են ներկայացված Հիսուսի խոսքերը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ չդառնաք ու չլինէք մանուկների պէս, երկնքի արքայութիւնը չէք մտնի։ Արդ, ով իր անձը խոնարհեցնում է ինչպէս այս մանուկը, երկնքի արքայութեան մէջ նա՛ է մեծ։ Եւ ով որ իմ անունով մի այսպիսի մանուկ ընդունելու լինի, ի՛նձ կընդունի»։

Սիրելի՛ քույրեր և եղբայրներ,

Հիսուս մեծության նոր չափանիշ է սահմանում մարդու համար՝ ընդունվածից հիմնովին տարբեր։ Եթե այս աշխարհի պատկերացման մեջ իշխանությամբ է որոշվում մեծությունը, ապա Հիսուս խոնարհությունն է հռչակում իբրև մեծության չափման միավոր։ Իսկ այդ խոնարհությունն այլ կերպ չի մարմնավորվում, քան ծառայությամբ։

Հիսուս, սակայն, մասնավոր է ընտրում մանկան օրինակը, քանի որ միայն մանուկներին է հատուկ՝ անշահախնդիր ծառայասիրության ոգին,

նրանք ուրախությամբ անխտիր սպասավորում են բոլորին, թե՛ մեծին և թե՛ փոքրին։ Եթե այս աշխարհի մարդն իշխանություն ունենալու միջոցով է իրեն կարևոր զգում, ապա մանուկը՝ դիմացինին ծառայելու։

Ինչպես տեղին նկատել է Սուրբ Գրոց արդի մեկնիչներից մեկը՝ Հիսուս չի քննադատում աշակերտների փառասեր մտածումները։ Նա, ավելի շուտ, վերականգնում է նրանց փառասիրությունը և ճիշտ ուղղվածություն տալիս։ Ղեկավարելու ցանկության փոխարեն Նա շեշտում է ծառայելու ցանկությունը։ Ուրիշներին աշխատեցնելու ցանկության փոխարեն, Նա ընդգծեց ամեն ինչ ի սեր ուրիշների անելու ցանկությունը։

«Ես չեկայ ծառայեցնելու, այլ՝ ծառայելու։ Ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ»,– *ասում է Հիսուս։*

Սիրելի՛ հայորդիներ,

Կյանքի իմաստը չպետք է սահմանափակենք միայն սեփական իղձերին ու ցանկություններին հագուրդ տալով։ Հիսուս ուսուցանում է, որ դիմացինին ծառայելու ցանկությունը չպետք է երբևէ զիջի մեր երազանքներն իրականացնելու ձգտմանը։ Եթե հավասար նժարների վրա գտնվեն այս երկուսը, ապա կխուսափենք այնպիսի անարդարություններից, ինչպիսիք են՝ աղքատությունը, անհավասարությունը և բաժանումը պակասություններ, որ ոչ միայն շատերի համար երբեմն անտանելի են դարձնում կյանքը, այլև աղավաղում մեր մարդկային դիմագիծը։ Վստահ եղեք, որ ցանկացած խնդիր՝ ընկերային, տնտեսական, քաղաքական ևս կլուծվի, եթե միայն մարդիկ վեր կանգնեն անձնական շահերից և մտորեն հայրենիքի ծառայության և դիմացինի բարօրության մասին, ճիշտ այնպես, ինչպես նախանձախնդիր են իրենց անձնական հարցերում։

Հիսուս չէր եկել ծառայեցնելու, այլ եկել էր ծառայելու համար. ուստի մենք ևս մշտապես հիշենք, որ կոչված ենք ծառայելու մեկս մյուսին, հարազատին ու անծանոթին, կարիքավորին, իսկ բոլորս մեկտեղ՝ մեր ազգին, Եկեղեցուն, պետությանը և հայրենիքին։